# ՀԱՒԱՏԱՄՔ

Հաւատամք յամենասուրբ Երրորդութիւն,

ի Հայր եւ ի յՈրդի եւ ի Սուրբ Հոգի:

Զաւետումն Գաբրիէլի, զԾնունդն Քրիստոսի,

զՄկրտութիւնն, զչարչարանս, զխաչելութիւնն,

զԹաղումն երեքօրեայ, զՅարութիւնն,

զաստուածապէս Համբարձումն, զնստիլն ընդ աջմէ հօր,

զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ Գալուստն՝

խոստովանիմք եւ հաւատամք:

***

# ՀԱՎԱՏԱՄՔ

Հավատում ենք Ամենասուրբ Երրորդությանը՝

Հորը և Որդուն եւ Սուրբ Հոգուն,

Գաբրիելի ավետմանը, Քրիստոսի ծննդյանը,

մկրտությանը, չարչարանքներին, խաչելությանը,

Երեքօրյա թաղմանը, հարությանը,

աստվածապես համբարձմանը, Հոր Աջ կողմում նստելուն,

ահավոր և փառավորյալ մյուսանգամ գալստյանը՝

խոստովանում ենք և հավատում:

***